Տնտեսական համագործակցության հարցերով հայ-չեխական միջկառավարական հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2014թ. հունվարի 30-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև տնտեսական և արդյունաբերական համագործակցության մասին» Համաձայնագրի: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնյանը, չեխական կողմից՝ Չեխիայի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարի տեղակալ Վլադիմիր Բարթլը: Հերթական երրորդ նիստը կկայանա 2017 թվականի սեպտեմբերի 11-ից 13-ը Երևանում: